ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-4

ՊԵԿ-ՇՀԾՁԲ-17-1-15/1 (ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/1) ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում ներդրված «Մաքսային կառավարման տեխնոլոգիաների և սարքավորումների արդիականացում» ծրագրի շրջանակներում համակարգի աշխատանքն ապահովելու նպատակով SIM քարտերի և նրանցով տեղեկատվության փոխանցման, ինտերնետային կապի ապահովման և սպասարկման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավարի 30.03.2017թ. N 33/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 12.04.2017թ. ժամը 11-00-ին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Գալստյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա.Դանիելյանը, Գ.Սարգսյանը, Գ.Բարսեղյանը, Ս.Ստեփանյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

-ՊԵԿ-ՇՀԾՁԲ-17-1-15/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ա.Գալստյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ՇՀԾՁԲ-17-1-15/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ն (ք. Երևան, Արգիշտի 4/1)
2. «ԱրմենՏել» ՓԲԸ-ն (ք. Երևան, Ահարոնյան 2)
3. «Յուքոմ» ՍՊԸ-ն (ք. Երևան, Տերյան 19, բն. 4)

-ՊԵԿ-ՇՀԾՁԲ-17-1-15/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին (ARMEPS) համակարգի միջոցով հայտ չեն ներկայացրել համակարգում 12.04.2017թ.-ի դրությամբ գրանցված մնացած մասնակիցները:

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

«Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի, «ԱրմենՏել» ՓԲԸ-ի և «Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերը էլեկտրոնային (ARMEPS) համակարգի կողմից դիտվել է որպես (պիտանի) հայտեր:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

-«Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի, «ԱրմենՏել» ՓԲԸ-ի և «Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, որոնք կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Ծառայության անվանումը	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ			Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ		
		«Ղ-Տելեկոմ» ՓԲԸ	«ԱրմենՏել» ՓԲԸ	«Յուքոմ» ՍՊԸ	«Ղ-Տելեկոմ» ՓԲԸ	«ԱրմենՏել» ՓԲԸ	«Յուքոմ» ՍՊԸ
1	ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում ներդրված «Մաքսային կառավարման տեխնոլոգիաների և	466667	293333.33	266666.67	560000	352000	320000

	սարքավորումների արդիականացում» ծրագրի շրջանակներում համակարգի աշխատանքն ապահովելու նպատակով SIM քարտերի և նրանցով տեղեկատվության փոխանցման, ինտերնետային կապի ապահովման և սպասարկման ծառայություններ						

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Հանձնաժողովը որոշեց՝

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

-գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ին, «ԱրմենՏել» ՓԲԸ-ին և «Յուքոմ» ՍՊԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներ:
2. «Յուքոմ» ՍՊԸ-ին ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից:
3. «ԱրմենՏել» ՓԲԸ-ի և «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հայտերը մերժել, քանի որ մասնակիցների կողմից ներկայացրած գները գերազանցում են ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի գնումների պլանով հաստատված նախահաշվային գինը (նախահաշվային գինը 320 000 ՀՀ դրամ է):
4. Սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:
5.Ոչ ավտոմատ եղանակով ծանուցել հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին՝ «Յուքոմ» ՍՊԸ-ին առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Գալստյան

Անդամներ՝ Ա.Դանիելյան

Գ.Սարգսյան

Գ.Բարսեղյան

Ս.Ստեփանյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան